

## **«Հաշվապահական հաշվառում և հարկում» առկա և հեռակա բակալավրիատի կրթական ծրագիր**

### **Ընդհանուր տեղեկություն**

«Հաշվապահական հաշվառում և հարկում»-ը բակալավրիատի ծրագիր է, որի նպատակն է պատրաստել համապատասխան գիտելիքներով, հմտություններով և կարողություններով օժտված տնտեսագետի՝ հաշվապահի, ով կարող է վարել առևտրային կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ ընկերություն) հաշվապահական հաշվառումը և պատասխանու լինել հարկային պարտավորությունների հաշվարկման համար:

Հաշվապահությունը գործընթաց է տնտեսական գործառնությունները հաշվառելու և ֆինանսական տեղեկատվության այնպիսի մշակման և ներկայացման, որը կօգնի ղեկավարներին, ներդրողներին, հարկային մարմիններին և այլ շահագրգիռ կողմերին որոշումներ կայացնելու: Այն հանդիսանում է ժամանակակից և արագ շարժվող արդյունաբերություն, որն օգտագործում է նորագույն տեխնոլոգիաներ և ձգում է մի շարք առավել մոտիվացված և խելացի շրջանավարտների: Հաշվապահական ոլորտը դինամիկ է և հեռանկարային, հաշվապահության վարումը պարտադիր և անհրաժեշտ է կազմակերպությունների համար, հետևաբար աշխատաշուկայում հարատև է պահանջարկը նման ոլորտի մասնագետների համար: Այս կրթական ծրագիրը պատրաստում է ուսանողներին նման մարտահրավերներին:

Ծրագրի մասնագիտական հիմնական ուղղվածություններն են՝ հաշվապահական հաշվառման հիմունքները, ֆինանսական հաշվառումը, կառավարչական հաշվառումը, հարկումը և հարկային հաշվառումը, ֆինանսատնտեսական վերլուծությունը, վերահսկողությունը և աուդիտը: Ծրագիրը իր մեջ ներառում է նաև տնտեսագիտության տեսության, մակրոտնտեսագիտության, ֆինանսների, մենեջմենթի, մարքեթինգի, բիզնեսի կազմակերպման և պլանավորման, ֆինանսական վերլուծության, տեղեկատվական համակարգերի, վիճակագրության, իրավագիտության և այլ ոլորտների վերաբերյալ իմացություն, որոնք կձևավորեն համապատասխան հիմնարար մտածողություն: Ծրագրի բարեհաջող ավարտին կտրվի տնտեսագիտության բակալավրի որակավորում, որը ավարտած անձը կարող է աշխատել որպես գլխավոր հաշվապահ կամ հաշվապահ, աուդիտոր, վերստուգող կամ վերլուծաբան:

Կրթական ծրագրի նպատակն է ուսանողներին տալ այնպիսի իմացություն, որը անհրաժեշտ և բավարար կլինի աշխատաշուկայում մրցունակ առաջարկ ձևավորելու համար:

### **Մասնագիտության նկարագիրը**

Հաշվապահ. անձ, որը վարում է ընկերության հաշվապահական հաշվառումը կամ մասնակից է նման վարման: Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառումը կարգավորում է համանուն օրենքով, որտեղ էլ սահմանվում է, որ իրավաբանական անձինք պետք է վարեն հաշվապահական հաշվառում, բացի այդ սահմանվում է, որ հաշվապահական հաշվառումը վարվում է Ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտների և հարկային հաշվառման պահանջներից ելնելով, ինչպես նաև հստակորեն նշվում է այն չափորոշիչներով, որոնց դեպքում ընկերությունները պարտադիր կերպով պետք է վարեն իրենց հաշվառումը հաշվապահական ծրագրերով: Այսպիսով, հաշվապահի մասնագիտական պարտականությունները արդեն իսկ սահմանված են ՀՀ իրավական ակտերում՝ մասնավորապես «Հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենքում» և Հարկային օրենսգրքում: Հետևաբար Կրթական ծրագրի նպատակն է շրջանավարտին տալ անհրաժեշտ և բավարար կարողություններ, որոնց միջոցով նա ի վիճակի կլինի աշխատել որպես հաշվապահ:

«Հաշվապահական հաշվառում և հարկում» ծրագիրը ավարտող շրջանավարտից ակնկալվում է հաշվապահական ոլորտը կարգավորող իրավական ակտերի, ՖՀՄՄ-ների և ՀՀ հարկային օրենսդրության<sup>2</sup> պահանջների համաձայն հաշվապահական հաշվառման վարման կարողություն, կառավարչական հաշվառման իրականացում, հարկման գծով պարտավորությունների հաշվարկման և դրանց օպտիմալացման կարողություն, ինչպես նաև ֆինանսական վերլուծության և վերահսկողության կարողություն:

Ծրագրի շրջանավարտը պետք է կարողանա ընկերության տնտեսական գործառնությունները փաստաթղթավորել, հաշվապահորեն ձևակերպել և գրանցել, կատարել հաշվապահական գնահատման դատողություններ, պատրաստել և ներկայացնել ֆինանսական հաշվետվությունները, կատարել ինքնարժեքի և ծախսումների հաշվարկ, հաշվարկել ընկերության հարկային պարտավորությունները, ներկայացնել այնպիսի տեղեկատվություն, որը օգտակար կլինի տնտեսական որոշումներ կայացնելու համար, վերլուծել և վերահսկել ֆինանսական տեղեկատվությունը և իհարկե տիրապետել ժամանակակից հաշվապահական ծրագրային ապահովումներին, ինչպես նաև իրականացնել համընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունների արժանահատության գնահատում՝ աուդիտ:

Ծրագրի ուսանողները ունեն հնարավորություն անցնելու իրենց պրակտիկան տարբեր ոլորտներում գործունեություն ծավալող առաջատար առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահությունում, ներքին վերահսկողական ծառայությունում և անկախ աուդիտորական ընկերություններում, որոնց հետ առկա են համապատասխան ՀՊՏՀ համագործակցության պայմանագրեր:

<sup>1</sup> Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ

<sup>2</sup> Հարկերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքը և անձին հարկատեսակների և պարտադիր վճարների իրավական կարգավորման նորմատիվային ակտեր

## **Աշխատանքի հնարավորություններ**

Շրջանավարտները կարող են աշխատել ցանկացած առևտրային կամ ոչ առևտրային կազմակերպություններում, որպես՝ գլխավոր հաշվապահ, հաշվապահ կամ հաշվետար-օպերատոր, ֆինանսավարկային հաստատություններում՝ հաշվապահ կամ հաշվետար-օպերատոր, հաշվապահական ծառայություններ մատուցող ընկերություններում, արտաքին աուդիտորական ընկերություններում որպես աուդիտոր, հաշվառման ավտոմատացման համակարգերով զբաղվող ընկերություններում՝ մասնագետ կամ խորհրդատու, ցանկացած կազմակերպության վերահսկողական ծառայությունում՝ ներքին աուդիտոր և/կամ վերստուգող, ինչպես նաև զբաղեցնել այլ պաշտոններ, որոնք առնչվում են ֆինանսական տեղեկատվության հավաքագրմանը, մշակմանը և վերլուծությանը: